Կազմված է «05» 04. 2022թ.
և բաղկացած է 39 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ № 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 05.04.2022թ. արտահերթ ընդհանուր ժողովի կողմից
Արձանագրություն 2/05.04.2022
Գլխավոր տնօրեն Պարագ Յոհաննես Բհատ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 26 հուլիսի 1994թ.
Վերագրանցված՝ 31.01.2000թ.
գրանցման թիվ 27.140.00009
վկայական 03Ա 069772
13.11.2019թ. գրանցված կանոնադրության
Թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Կողմից «06» 04 2022թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության
(նոր խմբագրությամբ)
2022

Drawn up on 05.04.2022
and consists of 39 pages
Printed only in 2 copies
COPY 1

APPROVED

By the Extraordinary General Meeting of Shareholders of "Zangezur Copper Molybdenum Combine" Closed Joint Stock Company dated 05.04.2022
Protocol No. 2/05.04.2022
General Director Parag Johannes Bhatt

REGISTERED
By the RA State Register of Enterprises on 26 July 1994
Re-registered on 31.01.2000
Registration number: 27.140.00009
Certificate: 03 A 069772
The amendment number _____ to the charter
registered on 13.11.2019
by the State Registry of Legal Entities
of the Republic of Armenia
on ___ _____ 2022

CHARTER
of "Zangezur Copper Molybdenum Combine" Closed Joint Stock Company
(new edition)
2022

I. ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության Կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) և ընդունված է

I. PREAMBLE

This document is the Charter of "Zangezur Copper Molybdenum Combine" Closed Joint Stock Company (hereinafter referred to as the **Charter**) and is adopted in accordance with Civil Code of the

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:	Republic of Armenia and the Law of the Republic of Armenia “On Joint Stock Companies”.
II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 1. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ նաև Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող սույն Կանոնադրությամբ սահմանված թվով տեղաբաշխված բաժնետոմսերի: Ընկերությունը հիմնադրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը ստեղծվել է ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության 09.12.1997թ. N 262 հրամանով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով: Ընկերությունը հանդիսանում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» պետական ձեռնարկության իրավահաջորդը: Ընկերությունը հանդիսանում է իրավաբանական անձ և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն Կանոնադրության համաձայն:	**II. GENERAL PROVISIONS** 1. “Zangezur Copper Molybdenum Combine” Closed Joint Stock Company (hereinafter referred to also as the “Company”) is an economic entity which is a commercial organization, the charter capital of which is divided into allocated shares certifying the ownership right of shareholders towards the Company. The Company is founded in accordance with the legislation of the Republic of Armenia. The Company is founded on the base of N 262 Order of the Ministry of Industry and Trade of the Republic of Armenia on 09.12.1997, by means of reorganizing “Zangezur Copper Molybdenum Combine” state enterprise. The Company is the successor of “Zangezur Copper Molybdenum Combine” state enterprise. The Company is a legal entity and conducts its activities in accordance with the Legislation of the Republic of Armenia and the present Charter.
2. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝ հայերեն՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն, ռուսերեն՝ Закрытое Акционерное общество “Зангезурский Медно-Молибденовый Комбинат” անգլերեն՝ “Zangezur Copper Molybdenum Combine” Closed Joint Stock Company: Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝ հայերեն՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ, ռուսերեն՝ ЗАО “ЗММК”	2. The Company’s full legal name is: In Armenian: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն In Russian: Закрытое Акционерное Общество «Зангезурский медно-молибденовый комбинат». In English: “Zangezur Copper Molybdenum Combine” Closed Joint Stock Company The Company’s short legal name is: In Armenian: «ԶՊՄԿ» ՓԲԸ In Russian - ЗАО “ЗММК” In English - ZCMC CJSC.

անգլերեն՝ ZCMC CJSC.	
3. Ընկերության գտնվելու վայրն է՝ 3309, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Քաջարան, Լեռնագործների 18:	3. The Company’s address is: 3309, 18 Lernagortsneri street, Kajaran city, Republic of Armenia.
4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել ՀՀ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ - մոլիբդենային հանքաքարի արդյունահանում և հարստացում, - պղնձի հանքաքարի արդյունահանում և հարստացում, - այլ գունավոր մետաղների արդյունահանում, - պայթեցման աշխատանքների իրականացում: Ընկերությունը գործունեության առանձին տեսակներով, կարող է զբաղվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրված լիցենզիայի կամ թույլտվության հիման վրա:	4. The Company may conduct any economic activity that is not prohibited by laws or other legal acts of the Republic of Armenia. The Company’s main activities are: – mining and enrichment of molybdenum ore. – mining and enrichment of copper ore. – mining of other non-ferrous metals. – fruition of blasting works. The Company may conduct certain types of activities only based on an appropriate license or permit granted in accordance with the legislation of the Republic of Armenia.
5. Ընկերությունն ունի առանձին հաշվեկշիռ, իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային նշաններ: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է սույն Կանոնադրությանը չհակասող գործունեություն, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պատասխանատվություն, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:	5. The Company has a separate balance sheet, round seal, stamps and letterheads with its name. The Company may have trademarks registered in accordance with procedures specified by laws. The Company signs contracts on its behalf, conduct activities that are not in conflict with the present Charter, acquire property and personal non-property rights, bears liabilities, may act in the courts as an applicant or respondent.
6. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ Ընկերության պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման:	6. The Company is considered established and can operate as a legal entity starting from the moment of Company’s registration. The Company operates without term limitation.
7. Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:	7. The Company possesses, uses and disposes its property according to its activities.
8. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի	8. The Company has the right to open bank accounts with banks of the Republic of Armenia and foreign states, other than the states with which

Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, բացառությամբ այն պետությունների, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ չունի:	the Republic of Armenia has no diplomatic relations, according to procedures stipulated by the law.
9. Ընկերության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշը շահույթն է:	9.The main financial indicator of Company's activities is the profit.
10. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:	10. The Company bears responsibility for its liabilities with all the assets owned by it on the basis of ownership right.
11. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար:	11. The Company is not responsible for liabilities of its shareholders.
12. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:	12. The Company's shareholders are not responsible for the Company's liabilities and bear the risks of losses related to the Company's activities within the value of shares owned by them.
13. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հիմնադրել հիմնարկներ և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ընկերություններ, և մասնակցել դրանց կապիտալում, ինչպես նաև մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կապիտալում:	13. The Company has the right to establish branches and representations, to found enterprises, to found daughter and subsidiary companies with the status of a legal entities and to participate in the capital thereof, as well as participate in other organizations capitals.
III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ 14. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 54 966 680 000 (հիսունչորս միլիարդ ինը հարյուր վաթսունվեց միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 2 748 334 (երկու միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար երեք հարյուր երեսունչորս) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերի (այսուհետ՝ «**բաժնետոմսեր**»), յուրաքանչյուրը 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:	**III. THE CHARTER CAPITAL OF THE COMPANY AND ITS CHANGE PROCEDURES** 14. The charter capital of the Company is 54 966 680 000 (fifty-four billion nine hundred sixty-six million six hundred eighty thousand) AMD that is divided into 2 748 334 (two million seven hundred forty-eight thousand three hundred thirty-four) allocated ordinary registered shares (hereinafter referred to as "**shares**") with the nominal value of 20 000 (twenty thousand) AMD for each share. The Company's allocated shares are fully paid.

15.Ընկերության հայտարարված և չտեղաբաշխված բաժնետոմսերի քանակը կազմում է 687 078 (վեց հարյուր ութսունյոթ հազար յոթանասունութ) հատ՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:	15.The number of the Company's announced and non-allocated number of shares is 687 078 (six hundred eighty seven seventy eight) shares with the nominal value of 20 000 (twenty thousand) AMD.
16. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի չափը:	16.The Company can change (increase or decrease) the value of its charter capital.
17. Կանոնադրական կապիտալի փոփոխման հարցով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ «**Ընդհանուր ժողով**» կամ «**Ժողով**») գումարման ծանուցումը պետք է պարունակի՝ 1) Կանոնադրական կապիտալի փոփոխման շարժառիթները, եղանակն ու չափը, 2) Կանոնադրության փոփոխման նախագիծը՝ կապված կանոնադրական կապիտալի փոփոխման հետ, 3) Բաժնետոմսերի քանակը և դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը, որը պետք է ստացվի կանոնադրական կապիտալի փոփոխման արդյունքում, 4) Նոր տեսակի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում՝ դրանց տեղաբաշխման կարգը և ժամկետները, բաժնետերերի իրավունքները նոր տեղաբաշխված բաժնետոմսերի և նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի նկատմամբ:	17. Notice of convocation of the General Meeting of the Company's shareholders (hereinafter referred to as the **"General Meeting"** or the **"Meeting"**) for the issue of changing the charter capital shall include: 1) The reasons, method and extent of change to the charter capital; 2) The draft of the Charter amendment related to the change of charter capital; 3) The number of shares and the total amount of their nominal value, which will be available as a result of changing the charter capital; 4) In the event any shares of a new type are allocated, the manner and timeframe of the allocation, the shareholders' rights in respect of the new shares allocated and the shares that were allocated earlier.
18. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Ընդ որում, Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Կանոնադրության 15-րդ կետով նախատեսված հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում: Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանվում են այդ բաժնետոմսերի թողարկման մասին Տնօրենների Խորհրդի (այսուհետ՝ «**Տնօրենների Խորհուրդ**» կամ «Խորհուրդ») որոշմամբ:	18. The Company's charter capital can be increased through increasing the nominal value of the Company's shares or through allocation of new shares. Moreover, the Company can make a decision on allocating new shares only within the limits of the number of announced shares provided for by clause 15 of this Charter. The procedures and conditions of allocation of announced shares are set forth by the decision of the Company's Board of Directors (hereinafter referred to as the "**Board of Directors**") on the issuance of such shares.
19. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունը՝	19. The decision on allocation of additional shares should specify the following information: 1) the number of allocated additional shares;

1) լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի քանակը, 2) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմաններն, այդ թվում՝ դրանց ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:	2) terms and conditions of allocation of additional shares including the value of shares being allocated to shareholders and holders of other securities having priority right to buy those shares.
20 Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝ 1) Շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ. 2) Կանոնադրական կապիտալի, պահուստային հիմնադրամի, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:	20. After summarizing its annual financial results, the Company can increase the charter capital by increasing the nominal value of allocated shares through: 1) Transferring part of the profit to the charter capital; 2) Transferring the property (net assets), or its part, that exceeds the total amount of the difference of liquidation and nominal values of charter capital, reserved fund as well as preferred shares, to the charter capital.
21. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան Տնօրենների Խորհրդի կողմից հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:	21. By means of increasing the nominal value of shares the Company cannot increase the charter capital for more than the net assets value fixed in the last balance sheet approved by the Board of Directors or net assets value as identified by the results of the last audit.
22. Կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝ 1) Բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ, 2) Բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:	22. The charter capital can be decreased: 1) Through reducing the nominal value of shares; 2) Through reducing the total number of shares including in cases stipulated by the Law of the Republic of Armenia on “Joint Stock Companies” through purchase and redeeming of part of those.
23. Կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է: Եթե ձեռքբերման	23. For the purpose of reducing the charter capital the Company can buy shares only with the consent of shareholders. Moreover, the purchase of shares offered to the Company with this purpose is the duty of the Company. If the number of shares offered for purchase exceeds the number specified by the appropriate decision, the shares are bought

առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:	from the shareholders in the proportion to their offers.
24. Ընկերությունը, կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին որոշումն ընդունելուց հետո երեսնօրյա ժամկետում, գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:	24.Within a 30-day period after taking the decision on reduction of the charter capital, the Company gives a written notice to its creditors. Within a 30-day period after receiving the notification, the creditors have the right to claim additional guarantees for fulfillment of obligations, termination or early fulfillment of obligations from the Company as well as compensation of losses incurred due to the latter.
IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ 25. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերն ու պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային:	**IV. COMPANY'S SECURITIES** 25. The Company can issue and allocate shares, bonds and other securities specified by the law. The issued and allocated shares and bonds of the Company are nominal and non-documentary (dematerialized).
26. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի նույնը նույն դասի և նույն տեսակի բաժնետոմսերի համար:	26. The nominal value of shares issued by the Company should be the same for the shares of the same class and type.
27. Բաժնետոմսն անբաժանելի է, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքով նախատեսված կոտորակային բաժնետոմսերի առաջացման դեպքերի: Եթե մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանում են երկու կամ ավելի անձինք, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:	27. The share is indivisible, other than in the cases giving rise to fractional shares stipulated by the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies". If two or more persons are owners of one share, they are considered as one shareholder.
28. Ընկերությունն իրավունք ունի՝ Ընդհանուր Ժողովի որոշմամբ, համախմբել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի մեկ նոր բաժնետոմսի, կամ բաժանել դրանք, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի երկու կամ ավելի բաժնետոմսերի: Նշված երկու դեպքերում Կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի և	28. With the decision of the General Meeting the Company can consolidate the allocated shares as a result of which two or more shares of the Company are converted to one new share of the same type, or to split those as a result of which one allocated share of the Company is converted to two or more shares of the same type. In both mentioned cases relevant amendments are made in the charter to the number and the nominal value of allocated and announced shares of the Company.

անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:	
29. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող է լինել գույքը, ներառյալ՝ դրամային միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, մտավոր սեփականություն:	29. Property, including financial means, securities and property rights and intellectual property can be means of payment for the shares of the Company.
30. Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի) թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության Տնօրենների Խորհրդի որոշմամբ, որը պետք է սահմանի դրանց մարման կարգը և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքի գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի չափը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:	30. The issuance and allocation of bonds and other securities (except of shares) are performed with the decision of the Board of Directors, which should define terms and conditions of their redeeming. Bonds should have a nominal value. The sum of nominal values of all secured bonds issued by the Company should not exceed the value of the charter capital or the amount of the guarantee, which is provided to the Company for issuing the bonds. Bonds cannot be issued up to the full replenishment of the Company’s charter capital.
31. Ընկերությունը կարող է թողարկել միանվագ մարման ժամկետով պարտատոմսեր, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարմամբ պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ արժեթղթերի թողարկման մասին որոշման համաձայն: Ընկերությունը իրավունք ունի թողարկել՝ 1) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր, 2) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր, 3) առանց ապահովման պարտատոմսեր:	31.The Company may issue one-time, as well as deferred redemption bonds (with time sequence specified by the Company). The repayment of bonds is made with money or other assets according to the decision on issuing the bonds. The Company can issue: 1) bonds secured with pledge of property of the Company; 2) bonds secured with guarantees provided by third parties for issuing the bonds; 3) unsecured bonds. Maintenance of the Register of owners of nominal bonds allocated by the Company must be handed to the specialized organization in accordance with the

Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը պետք է հանձնվի մասնագիտացված կազմակերպություն՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:	law of the Republic of Armenia on “Securities Market”. The Company can provide an opportunity for early repayment of bonds if requested by their owners. In that case the decision on issuing the bonds specifies the amount subject to repayment and the term starting with which the bonds can be submitted for early repayment.
32. Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերն արտոնյալ պայմաններով ձեռք բերելու իրավունք: Ընդ որում, Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:	32. The Company can issue convertible bonds and other securities, that give the right of converting the bonds and other securities of the Company to shares or the privileged right to buy shares. In this context the Company does not have the right to allocate convertible bonds and other securities if the number of declared shares by types and forms is less than the number of announced shares of the mentioned types and forms which are necessary to secure the opportunity to convert bonds and other securities into the Company shares.
33. Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ Ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատարանի որոշմամբ:	33. The interest of bonds is paid within the term indicated on those but not less than once a year regardless of the financial situation and profit (except the bonds participating in the profit) of the Company. The Company may be liquidated by Court decision for failing to pay the interest of the bonds or repay the bonds within the specified term.
V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 34. Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Ընկերության բաժնետերերն	**V. RIGHTS AND OBLIGATIONS OF COMPANY SHAREHOLDERS** 34. Each share of the Company gives the equal rights to its shareholder. The Company’s shareholders have a preemptive right to buy shares being sold by other shareholders of the Company.

ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե որևէ բաժնետեր ցանկանում է վաճառել իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, ապա նա այդ մասին ծանուցում է Ընկերությանը՝ համապատասխան ծանուցում ուղարկելով ընկերության Գլխավոր տնօրենին (այսուհետ՝ «**Գլխավոր տնօրեն**»): Ծանուցումը պետք է պարունակի տվյալներ վաճառվող բաժնետոմսերի քանակի և գնի մասին: Այդպիսի ծանուցումը ստանալու պահից երեք օրվա ընթացքում Գլխավոր տնօրենը ծանուցումը ուղարկում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցման պայմանով կամ այն Ընկերության մյուս բաժնետերերին առձեռն հանձնելու միջոցով: Պատվիրված նամակը բաժնետիրոջ կողմից ստանալու ամսաթիվը համարվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օր:	If any shareholder wishes to sell shares owned by him/her based on ownership right, he/she shall notify the Company by sending a relevant notice to the General Director of the Company (hereinafter referred to as the "**General Director"**). The notice should contain data on the number and price of shares being sold. Within three days after receiving the above-mentioned notice the General Director sends the notice or the notification by certified mail with return receipt requested or by delivering it personally to other shareholders of the Company. The date of receipt of the certified mail by the shareholder is considered the day of offering the sale of shares.
Եթե որոշ բաժնետերեր համաձայնվում են ձեռք բերել առաջարկվող բաժնետոմսերը (օգտվում են նախապատվության իրավունքից), ապա յուրաքանչյուր նման բաժնետեր իրավունք ունի ձեռքբերել իր բաժնետոմսերի և Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի հարաբերակցությանը համապատասխանող քանակի բաժնետոմսեր: Այն դեպքում, երբ բաժնետոմսերը համամասնորեն բաշխելիս յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին է ընկնում ոչ ամբողջական թվով (կոտորակային) բաժնետոմսեր, Տնօրենների Խորհուրդը որոշում է ընդունում բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման մասին, այնպես, որ յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին ընկնի ամբողջական թվով բաժնետոմսեր: Եթե բաժնետերերը ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում իրենց նախապատվության իրավունքից օգտվելու մտադրության մասին գրավոր ծանուցում չեն ուղարկում Ընկերությանը, ապա Գլխավոր տնօրենի պահանջով կամ Տնօրենների Խորհուրդի սեփական նախաձեռնությամբ հրավիրում է արտահերթ ժողով, որի օրակարգում ընդգրկվում է Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ հրաժարվելու հարցը: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել	If some of the shareholders agree to purchase the offered shares (avail of preemptive right), then each of such shareholders shall have the right to purchase shares in proportion to the shares owned by him/her and the total quantity of the shares allocated by the Company. If each shareholder receives a non- whole number (fractional) shares when dividing the shares proportionally then the Board of Directors decides to change the nominal value of the shares, so that each shareholder gets a whole number of shares. If within a 30-day period after receipt of the notification the shareholders do not send a written notice to the Company about their intention to ecercise their preemptive right, following the request of the General Director or with its own initiative the Board of Directors announces an extraordinary meeting with an agenda including the issue of purchase or refusal to purchase the shares by the Company. In case when the Company refuses to purchase the shares, those can be sold to third parties. The shareholder can't sell the share to a third party at a lower price or on other favourable conditions than offered to other shareholders and the Company. The term during which a certain shareholder may exercise his/her preemptive right to purchase the

երրորդ անձանց: Բաժնետերը չի կարող բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց ավելի ցածր գնով կամ այլ բարենպաստ պայմանով, քան առաջարկել է մյուս բաժնետերերին և Ընկերությանը Ընկերության օտարվող բաժնետոմսերը ձեռք բերելու կոնկրետ բաժնետիրոջ նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև նշված ժամկետի լրանալը այդ բաժնետիրոջից ստացվի ձեռքբերման նախապատվության իրավունքից հրաժարվելու մասին գրավոր դիմում: Ընկերության կողմից սույն կետի համաձայն գնված բաժնետոմսերը ձայնի իրավունք չեն տալիս, ձայները հաշվելիս հաշվի չեն առնվում, և դրանց վրա շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Նման բաժնետոմսերը պետք է իրացվեն ոչ ուշ, քան դրանց ձեռքբերման (Ընկերության սեփականության իրավունքի գրանցման) օրվանից մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում բաժնետերերի Ընդհանուր Ժողովը պետք է որոշում կայացնի Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին՝ նշված բաժնետոմսերը մարելով կամ մարելով նշված բաժնետոմսերը և ավելացնելով մնացած բաժնետոմսերի անվանական արժեքը՝ առանց կանոնադրական կապիտալը փոխելու: Ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերն իրացնելիս անձանց սահմանափակ շրջանակ չի ստեղծվում, Ընկերության բաժնետերերը այդ բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունք չունեն:	Company’s shares terminates if, prior to the expiry of such term, a written waiver of such preemptive right has been received from such shareholder. The shares acquired by the Company in accordance with this clause shall not grant voting rights, they shall neither be taken into account in vote counting nor bear dividends. Such shares shall be realized no later than one year from the date of their acquisition (registration of the Company's title). Otherwise, the General Meeting of shareholders shall pass a decision to reduce the Company’s charter capital by redeeming such shares or to redeem such shares and increase the nominal value of the remaining shares without changing the charter capital. There is no limited number of persons to whom the shares acquired by the Company shall be sold, the Company's shareholders shall have no preemptive right to purchase such shares.
35 Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝ 1) Մասնակցել Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի վերաբերյալ ձայնի իրավունքով, 2) Մասնակցել Ընկերության կառավարմանը, 3) Ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, 4) Առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, 5) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ և Ընկերության ներքին փաստաթղթերով նախատեսված կարգով և	35. The shareholder owning a share has the right to: 1) Participate in the General Meeting with a voting right for all issues in the competence of the latter; 2) Participate in the governance of the Company; 3) Receive dividends from the profits generated by the Company’s activities; 4) Acquire the shares issued by the Company on a preemptive basis; 5) Receive information about the Company's activities and have access to the Company's documents in the manner and to the extent set forth in the applicable laws of the Republic of Armenia,

սահմաններում տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին և հասանելիություն ունենալ Ընկերության փաստաթղթերին, 6) Ընդհանուր Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի, 7) Հանդես գալ առաջարկություններով Ընդհանուր Ժողովում. 8) Ընդհանուր Ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի համար նախատեսված ձայների քանակով, 9) Դիմել դատարան՝ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների վիճարկման նպատակով, 10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության ակտիվների իրեն հասանելիք բաժնեմասը, 11) Ունենալ Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:	this Charter and internal documents of the Company; 6) Authorize a third party to represent him/her at the General Meeting; 7) Make proposals at the General Meeting; 8) Vote at the General Meeting within the limits of votes of shares owned by himself/herself; 9) Go to court with the purpose of appealing against the decisions taken by the General Meeting and the Board of Directors that contradict the adopted and effective laws and by-laws; 10) In case of liquidation of the Company, receive a part of the Company's assets in respective portion; 11) Have other rights stipulated by the Charter.
36. Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 (հինգ) տոկոսը կազմող քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետերերն իրավունք ունեն պահանջել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, եթե համապատասխան ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտի կամ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ համապատասխան ժամանակաշրջանի հաշվետվության աուդիտի արդյունքները հավաստի չեն կամ ոչ ճշգրիտ են: Այդ դեպքում, աուդիտորական ստուգումների հետ կապված ծախսերը կրում են ստուգում պահանջող բաժնետերերը:	36. The shareholders owning voting shares which account to at least 5 (five) percent of the Company's charter capital may request an audit of the Company's financial statements if the financial statements for the relevant period have not been audited or there are sufficient grounds to believe that the results of the audit of the financial statements for the relevant period are unreliable or inaccurate. In this case, the expenses related to the audit shall be borne by the shareholders who requested such audit.
37. Բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության գործունեության մասին գաղտնի տեղեկություններ: Գաղտնի տեղեկատվություն հանդիսացող տվյալների ցանկը սահմանում է Տնօրենների խորհուրդը:	37. The shareholder shall not disclose confidential information about the Company's activities. The list of data related to the confidential information is defined by the Board of Directors.
VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ 38. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամի չափը նշված չափից ավելի փոքր է, ներդրումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության կողմից նոր արժեթղթերի տեղաբաշխման	**VI. THE COMPANY'S FUNDS** 38. A reserve fund with 15 (fifteen) percent of the charter capital is created within the Company. If the reserve fund is smaller size than indicated, the contributions to the fund are made from the profits in at least 5 percent as well as from funds generated from the difference between the allocation value of the new securities of the Company and their nominal value. The reserve fund is used for covering Company's losses, repaying the bonds and buying back the

արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները այդ նպատակների համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:	shares if the Company's profits and other resources are not sufficient for those purposes. The reserve fund may not be used for other purposes.
VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ 39. Ընկերությունը չի երաշխավորում շահութաբաժինների վճարումը:	**VII. COMPANY'S DIVIDENDS** 39. Dividend payments are not guaranteed by the Company.
40. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին:	40. The Company shall pay dividends if it has made a decision (announced) on paying dividends for allocated shares.
41. Շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով նաև այլ գույքով:	41. The dividends are paid in AMD or with other assets.
42. Տարեկան շահութաբաժինների վճարման և չափի մասին որոշումն ընդունվում է Ընկերության Ընդհանուր Ժողովի կողմից՝ Ընկերության Տնօրենների Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և չափի մասին որոշումն ընդունվում է Ընկերության Տնօրենների Խորհրդի կողմից: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:	42.The decision on payment of annual dividends and the amount of dividends is made by the General Meeting upon suggestion by the Board of Directors. The decision on payment of interim (quarterly and semi-annual) dividends and the amount of those is taken by the Board of Directors. The amount of annual dividends cannot be more than that suggested by the Board of Directors and less than the amount of interim dividends already paid out.
43. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր Ժողովի կողմից՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, որը սկսվում է Ընկերության յուրաքանչյուր ֆինանսական տարվա հուլիսի 1-ից և ավարտվում՝ շահութաբաժինների վճարման պարտավորության կատարմամբ, բայց ոչ ուշ, քան համապատասխան որոշման ընդունման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 (երեսուն) օր:	43.The term of paying annual dividends shall be determined by the General Meeting in its decision to pay annual dividends. It starts from the 1st of July of the Company's each financial year and ends up with the performance of payment obligation but no later than 30 (thirty) days after the date of the relevant decision. The term of paying the interim dividends shall be determined by the Board of Directors with the decision on paying interim dividends but not earlier than after 30 (thirty) days from the moment of taking the decision.

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ 44. Ընկերությունը պարտավոր է ապահովել փաստաթղթերի և ռեեստրի վարումը և ապահովումը՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով:	**VIII. REGISTRY OF SHAREHOLDERS AND HOLDERS OF OTHER SECURITIES OF THE COMPANY** 44. The Company shall ensure record-keeping and maintenance of the registry according to the procedure stipulated by legal acts of the Republic of Armenia.
45. Ընկերության ռեեստրը վարվում է մասնագիտացված ընկերություն կողմից:	45. The Company's register is kept and maintained by a specialized company.
46. Բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին:	46. Shareholders, as well as owners of the Company's other securities shall be obliged to timely inform the person in charge of the Company's register keeping about changes in data concerning themselves.
47. Ռեեստրի վարումը, գրառումների ավելացումը և արժեթղթերի սեփականատերերի անձնական հաշիվների սպասարկումը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:	47. Record-keeping of the registry, the adding records and serving of personal accounts of owners of securities is conducted in accordance with the laws of the Republic of Armenia on "Join-Stock Company" and on "Securities Market".
IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 48. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի Ընդհանուր Ժողովն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողով հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փետրվար ամսից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի Ընդհանուր Ժողովները համարվում են արտահերթ:	**IX. STRUCTURE OF MANAGEMENT BODIES OF THE COMPANY** 48. The shareholder's General Meeting is the supreme body of the Company's management. After the end of each financial year, the Company shall hold an annual General Meeting once a year within the period from February to June 30th. General Meetings held besides the annual General Meeting are considered extraordinary.
49 Ընկերության բաժնետերերի Ընդհանուր Ժողովի իրավասություններն են՝ 1) Ընկերության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխություններ կատարելը և Ընկերության Կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը	**49 The following matters are within the scope of authorities of the General Meeting:** 1) Approval of the Company's Charter, making amendments and changes in it, approving the new reduction of the Company's Charter (the decision is adopted with 3/4 of votes of the owners of voting

(որոշումն ընդունվում է ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ այլ ներկայացուցչի կողմից (կամ կազմակերպությունը, որի բաժնետոմսերի (50 և ավելի տոկոս) պատկանում են Հայաստանի Հանրապետությանը) որպես Ընկերության բաժնետեր քվեարկել է «ԿՈՂՄ»՝ նման որոշման առնչությամբ),	shares participating in the Meeting, provided that the Republic of Armenia represented by the Government of the Republic of Armenia or other representative (or an entity whose shares (50 or more percent) are held by the Republic of Armenia) voted "IN FAVOR" of such decision as shareholder of the Company);
71. Տնօրենների Խորհրդի նախագահն ընտրվում է Տնօրենների Խորհրդի անդամների կողմից՝ Տնօրենների Խորհրդի անդամների կազմից Տնօրենների Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Տնօրենների խորհուրդը ցանկացած ժամանակ կարող է վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Տնօրենների Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Միևնույն անձը չպետք է զբաղեցնի Ընկերության Տնօրենների Խորհրդի նախագահի և Գլխավոր տնօրենի պաշտոնները:	71.The Chairman of the Board of Directors shall be elected by the Board members from among themselves by a majority vote of the total number of votes of the Board members. The Board of Directors can re-elect the Chairman or elect a new Chairman at any time by a majority vote of the total number of votes of the Board members. The positions of the Chairman of the Board of Directors and the General Director of the Company cannot be taken by the same person.
72. Տնօրենների Խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող Տնօրենների Խորհրդի անդամը նախագահում	72. The Chairman of the Board of Directors or the Board's member performing his/her duties chairs the meetings except for cases if otherwise stipulated by the procedure of holding the meeting.

է ժողովներին, բացառությամբ ժողովի վարման կարգով նախատեսված դեպքերի:	
73. Տնօրենների Խորհրդի նիստերը անց են կացվում ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս քան կես տարին մեկ անգամ՝ Տնօրենների Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Տնօրենների Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, գործադիր մարմնի անդամի, աուդիտորի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով:	73.The sessions of the Board of Directors are held when necessary but not less than once in six months with the initiative of the Chairman of the Board of Directors, with the request of the member of the Board of Directors, the Audit Commission, the executive body, the auditor as well as the shareholders holding 10 or more percent of voting shares.
74. Տնօրենների Խորհրդի նիստերը վարում է Տնօրենների Խորհրդի նախագահը: Տնօրենների Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Տնօրենների Խորհրդի որոշմամբ կատարում է Տնօրենների Խորհրդի անդամներից մեկը: Տնօրենների Խորհրդի նիստերն անց են կացվում Տնօրենների Խորհրդի անդամների համատեղ մասնակցությամբ (այդ թվում՝ հեռախոսակապով, տվյալների հեռահար փոխանցման կամ կապի այլ միջոցներով, որոնք ապահովում են իրական ժամանակում մասնակիցների միջև հաղորդակցությունը) կամ հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերության Կանոնադրությամբ այլ բան է նախատեսված: Տնօրենների խորհուրդն ունի քվորում (իրավասություն), եթե ներկա է Տնօրենների Խորհրդի անդամների կեսից ավելին: Տնօրենների Խորհրդի բոլոր որոշումներն ընդունվում են Տնօրենների Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Տնօրենների Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չի թույլատրվում ձայնի կամ ձայնի իրավունքի փոխանցում: Ձայների հավասարության դեպքում Տնօրենների Խորհրդի նախագահի ձայնը համարվում է որոշիչ: Տնօրենների Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված Տնօրենների Խորհրդի կանոնակարգով:	74. The Chairman of the Board of Directors chairs the Board meetings. In case of absence of the Board Chairman, his/her duties are carried out by one of Board's members upon the decision of the Board of Directors. The Board of Directors Meetings (sessions) are held by joint participation of the Board of Directors members (including by telephone, telecommunication or other means of communication through intercommunication of the participants with each other in real time mode) or by remote voting (by inquiry) unless otherwise provided by the Charter of the Company. The Board of Directors has a quorum (is entitled to make decisions) if more than half of the Board members are present. All decisions of the Board of Directors are adopted by a simple majority vote of the total number of votes of the Board of Directors members. During the voting each member of the Board of Directors has only one vote. Transfer of the vote or the voting right is not permitted. In case of equal votes, the vote of the Chairman of the Board of Directors is decisive. The procedure for calling and holding of Board sessions is specified in the Board of Directors Regulations adopted by the General Meeting.

75. Եթե սույն Կանոնադրության 67-րդ կետի 17-րդ ենթակետով նախատեսված գործարք կնքելու մասին որոշումը չի ընդունվել Տնօրենների Խորհրդի կողմից, ինչպես նաև այն դեպքերում, երբ Կանոնադրության X գլխի իմաստով գործարքի հետ կապ չունեցող Տնօրենների Խորհրդի անդամների քանակը դառնում է երկուսից պակաս, Տնօրենների խորհուրդը որոշում է ընդունում հարցը Ժողովում քննարկելու մասին:	75. If the decision on entering a transaction as stipulated in paragraph 17 of clause 67 of this Charter is not approved by the Board of Directors, as well as in the cases where the number of the Board members not related to the transaction, within the meaning of Chapter X of this Charter, is less than 2, the Board of Directors approves a decision on discussing the issue at the Meeting.
76. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը, որն ընտրվում է Ընդհանուր Ժողովի կողմից: Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման հետ կապված բոլոր հարցերը, բացառությամբ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերի: Ընդհանուր Ժողովի կողմից Ընկերության Գլխավոր տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության անունից ստորագրում է Տնօրենների Խորհրդի Նախագահը կամ Նախագահի պարտականությունները կատարող Տնօրենների Խորհրդի անդամը:	76.The management of daily activities of the Company is conducted by the sole executive body of the Company — the General Director, which is elected by the General Meeting. The scope of authority of the General Director includes all issues related to management of daily activities of the Company except of issues representing the exclusive authorities of the General Meeting and the Board of Directors. Upon appointment of the General Director by the General Meeting, the Company signs a contract with him/her which is signed by the Chairman of the Board of Directors or the member of the Board of Directors who performs the Chairman's duties on behalf of the Company.
77. Գլխավոր Տնօրենի մասին Կանոնակարգի համաձայն, Ընկերության Գլխավոր տնօրենը՝ 1) Կառավարում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կնքում Ընկերության անունից. 2) Գործում է Ընկերության անունից առանց լիազորագիր ստանալու անհրաժեշտության. 3) Ներկայացնում է Ընկերության շահերը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում. 4) Հաստատված կարգով ստորագրում է պայմանագրեր (այդ թվում աշխատանքային պայմանագրեր). 5) Տալիս է լիազորագրեր. 6) Բանկերում բացում է Ընկերության հաշիվներ (այդ թվում՝ արտարժութային). 7) Հաստատում է ներքին աշխատանքային կանոնակարգը. 8) Հաստատում է առանձնացված ստորաբաժանումների աշխատանքի կանոնակարգերը. 9) Հաստատում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը.	77. According to the General Director Regulation, the General Director of the Company: 1) Manages the Company's property including financial resources, signs transactions on behalf of the Company; 2) Acts on behalf of the Company without power of attorney; 3) Represents the Company in the Republic of Armenia and abroad; 4) Signs contracts including work contracts according to approved procedure; 5) Provides powers of attorney; 6) Opens accounts for the Company in the banks (including in foreign currency); 7) Approves the internal labor regulations; 8) Approves the procedures of the Company's divisions; 9) Approves the administrative and organizational structure of the Company; 10) Approves the list of staff;

10) Հաստատում է Ընկերության հաստիքացուցակը. 11) Իրականացնում է Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը կամ հետգնումը. 12) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և հրահանգներ, որոնք կրում են պարտադիր բնույթ և վերահսկում է դրանց կատարումը. 13) Հաստատված ընթացակարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին. 14) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական ներգործության միջոցներ. 15) Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, Գլխավոր Տնօրենի Կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:	11) Acquires and repurchases the shares allocated by the Company; 12) Within the scope of his/her authority, issues orders and instructions that are obligatory, and controls implementation of those; 13) Hires and dismisses employees of the Company according to the approved procedure; 14) Applies rewarding and disciplinary measures for employees; 16) Exercises other powers provided by RA legislation, this Charter, the General Director Regulations.
78. Ընկերության անվանմամբ կլոր կնիքը գտնվում է Ընկերության Գլխավոր տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է Գլխավոր տնօրենին և վերջինիս կողմից լիազորված անձին: Ընդհանուր Ժողովի որոշմամբ Գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, նա պարտավոր է Ընդհանուր Ժողովի որոշումից հետո 10 օրվա ընթացքում Ընկերության անվանմամբ կլոր կնիքը, իր տիրապետման ներքո գտնվող Ընկերության այլ փաստաթղթերն ու գույքը հանձնել Ընդհանուր Ժողովի կողմից նշանակված նոր Գլխավոր տնօրենին կամ Գլխավոր տնօրենի պաշտոնակատարին: Սույն կետում նշված պարտավորությունը Գլխավոր տնօրենի կողմից սահմանված ժամկետում չկատարելու դեպքում, նոր Գլխավոր տնօրենը կամ Գլխավոր տնօրենի պաշտոնակատարն Ընկերության անունից հայտարարում է կլոր կնիքի անվավերության մասին և օրենքով ու այլ ենթաօրենսդրական ակտերով սահմանված կարգով պատվիրում Ընկերության անվանմամբ նոր կլոր կնիք:	78. The round seal with the Company’s name is at the disposal of the General Director. The authority to use it belongs to the General Director and a person authorized by him. In case of early termination of the General Director’s authorities by the General Meeting decision, within 10 days upon the General Meeting decision he/she shall hand the round seal with Company’s name, all documents and assets of the Company that have been under his/her control to the General Director or to acting General Director newly appointed by the General Meeting. In case of the General Director’s failing to ensure the obligations as prescribed in this point in specified period of time, the new General Director or the acting General Director announces about the invalidity of the round seal on behalf of the Company and orders a new round seal with the name of the Company one in accordance with law and other legal acts.
79. Գլխավոր տնօրենն իր պարտականությունների կատարման ընթացքում գործում է Ընկերության շահերից ելնելով:	79.The General Director acts in the best interests of the Company during accomplishment of his/her duties.
80. Ընկերության Գլխավոր տնօրենն ունի առաջին տեղակալ և կարող է ունենալ տեղակալներ, որոնց քանակը և	80. The General Director has the first deputy and may have deputies whose number and extent of authority are defined by the General Director.

լիազորությունների ծավալը սահմանվում են Գլխավոր տնօրենի կողմից:	
X. ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԱՆՁԱՆՑ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԻ ՀԵՏ 81. Խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումը կայացվում է Ընդհանուր Ժողովի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն Կանոնադրությամբ և Ընկերության ներքին փաստաթղթերով սահմանված կարգով:	**X MAJOR TRANSACTIONS AND TRANSACTIONS WITH THE SPECIFIED GROUP OF PERSONS** 81. The decision to enter into a major transaction shall be made by the General Meeting in accordance with the procedure stipulated by the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies", this Charter and internal documents of the Company.
82. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխի («Ընկերության գործարքների նկատմամբ շահագրգռվածության») դրույթները ամբողջությամբ չեն կիրառվում Ընկերության նկատմամբ:	82 The provisions of Chapter IX of the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies" ("Interest in the Company's Transactions") shall not fully apply to the Company.
83. Անձանց որոշակի խմբի հետ գործարքը ճանաչվում է այն գործարքը, որը կապված է Տնօրենների Խորհրդի անդամի, Ընկերության կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող, Ընկերության վերահսկող անձ հանդիսացող անձի հետ կամ Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող անձի հետ (այսուհետ՝ «**Գործարք անձանց որոշակի խմբի հետ**»): Նշված անձինք ճանաչվում են անձանց որոշակի խմբի գործարքի հետ կապված այն դեպքերում, եթե նրանք, իրենց ամուսինները, ծնողները, երեխաները, հարազատ և կիսով չափ հարազատ եղբայրներն ու քույրերը, որդեգրողները և որդեգրված և (կամ) իրենց հսկողության տակ գտնվող անձինք (վերահսկվող կազմակերպություններ). 1) Հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ. 2) Տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին. 3) Զբաղեցնում են պաշտոններ գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում: Սույն կետի նպատակների համար վերահսկող անձ է ճանաչվում այն անձը, ով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով (իր ենթավերահսկողության տակ գտնվող	83 A Transaction with the Specified Group of Persons is a transaction involving a member of the Board of Directors, a person holding any other position in the Company's management bodies, a person controlling the Company or a person that has the power to give binding directions to the Company (hereinafter referred to as a "**Transaction with the Specified Group of Persons**"). Such persons shall be deemed to be related to a Transaction with the Specified Group of Persons if they, their spouses, parents, children, blood brothers and sisters and half brothers and sisters, adoptive parents and adopted children and/or persons (entities) controlled by them: 1) Are parties to the transaction or participate in the transaction as an intermediary or a representative; 2) Own 20 percent or more of the voting shares (participation interests, stocks) of a legal entity that is a party to the transaction, an intermediary or a representative; 3) Hold positions in the management bodies of a legal entity that is a party to the transaction, an intermediary or a representative. For the purposes of this clause, a controlling person is a person that has the power to cast, directly or indirectly (through persons controlled by it), by virtue of its participation in a controlled entity and/or pursuant to an agreement regarding the exercise of the rights certified by the shares

անձանց միջոցով) տնօրինել ենթավերահսկվող կազմակերպությունում մասնակցության ուժով և (կամ) համաձայնագրի հիման վրա, որի առարկան ենթավերահսկվող կազմակերպության բարձրագույն կառավարման մարմնի ձայների 50 տոկոսից ավելին բաժնետոմսերով (բաժնեմասերով) հաստատված իրավունքների իրականացումն է, կամ միանձնյա գործադիր մարմին և (կամ)) ենթավերահսկվող կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի կազմի ավելի քան 50 տոկոսը նշանակելու (ընտրելու) իրավունքը: Ենթավերահսկվող անձը (ենթավերահսկվող կազմակերպությունը) իրավաբանական անձ է, որը գտնվում է վերահսկող անձի անմիջական կամ անուղղակի վերահսկողության ներքո: Սույն կետի նպատակների համար Հայաստանի Հանրապետությունը վերահսկող անձ չի ճանաչվում:	(participation interests) of a controlled entity, more than 50 percent of votes in the supreme management body of a controlled entity or to appoint (elect) the sole executive body and/or more than 50 percent of the members of the collective management body of a controlled entity. A controlled person (controlled entity) is a legal entity that is under the direct or indirect control of the controlling person. For the purposes of this clause, the Republic of Armenia shall not be deemed to be a controlling person.
84. Կանոնադրության 83-րդ կետում նշված անձինք պարտավոր են Տնօրենների Խորհրդին, Վերստուգիչ հանձնաժողովին (վերստուգողին) և Ընկերության աուդիտ իրականացնող անձին տեղեկատվություն տրամադրել՝ 1) Իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ Կանոնադրության 83-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (փայերի, բաժնեմասերի) 20 և ավելի տոկոսին. 2) Իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում զբաղեցնում են պաշտոններ. 3) Իրենց հայտնի կնքված կամ կնքվելիք գործարքների մասին, որոնցում նրանք կարող են համարվել փոխկապակցված անձինք:	84. The persons specified in paragraph 83 of the Charter shall provide the Board of Directors, the Audit Commission (the auditor) and the person performing the Company’s audit with the information: 1) About the legal entities in which they, individually or jointly with the person(s) specified in the second paragraph of clause 83 of the Charter, hold 20 percent or more of voting shares (participation interests, stocks); 2) About the legal entities in whose management bodies they hold positions; 3) About the actual or proposed transactions known to them, in which they may be deemed to be related persons.
85. Անձանց որոշակի խմբի հետ գործարքը չի պահանջում դրա կնքման վերաբերյալ պարտադիր նախնական որոշման ընդունում: Անձանց որոշակի խմբի հետ Գործարքի կնքման մասին որոշում կարող է ընդունվել Ընկերության բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, որը (որոնք) տիրապետում է(են) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 15 տոկոսին: Անձանց որոշակի խմբի հետ Գործարքի կնքման համաձայնության հարցը լուծելու նպատակով Բաժնետերերի Ընդհանուր Ժողով կամ Տնօրենների Խորհրդի նիստ անցկացնելու մասին պահանջն ուղարկվում և	85. A Transaction with the Specified Group of Persons does not require a mandatory prior approval. A decision to enter into a Transaction with the Specified Group of Persons may be made at the request of the Company's shareholder(s) holding at least 15 percent of the Company's voting shares. A request to hold a General Meeting of shareholders or a meeting of the Board of Directors in order to approve a Transaction with the Specified Group of Persons shall be submitted and considered in accordance with the procedure for convening an extraordinary General Meeting

քննարկվում է Կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» Օրենքով սահմանված կարգով արտահերթ Ընդհանուր Ժողով հրավիրելու համար: Տնօրենների խորհուրդն իրավունք ունի Կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով մերժել Ընդհանուր Ժողովը կամ Տնօրենների Խորհրդի նիստն անցկացնելու պահանջը Ընդհանուր արտահերթ ժողով գումարելու համար, ինչպես նաև այն դեպքում, երբ պահանջի քննարկման պահին արդեն իսկ առկա է համապատասխան գործարքը կնքելու կամ այն մերժելու մասին Տնօրենների Խորհրդի որոշումը: Պահանջների կրկնակի անգամ ներկայացումը հնարավոր է ոչ շուտ, քան երեք ամիս անց:	stipulated by the Charter and the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies". The Board of Directors has the right to dismiss a request to hold a General Meeting or a meeting of the Board of Directors on the grounds for convening an extraordinary General Meeting stipulated by the Charter and the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies", or if at the time when the request is submitted for consideration the Board of Directors has already made a decision to approve or refuse to approve the relevant transaction. A second request may be submitted no earlier than three months thereafter.
86. Անձանց որոշակի խմբի հետ Գործարք կնքելու մասին որոշումը կայացնում է Տնօրենների Խորհուրդը՝ գործարքի հետ կապ չունեցող Տնօրենների Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Եթե գործարքի հետ կապ չունեցող Տնօրենների Խորհրդի անդամների թիվը դառնում է երկուսից պակաս, ապա նման գործարք կնքելու մասին որոշումը կայացնում է Ընդհանուր Ժողովը՝ գործարքի հետ կապ չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:	86. A decision to enter into a Transaction with the Specified Group of Persons shall be made by a majority vote of the Board of Directors members who are not related to the transaction. If the number of the Board of Directors members not related to the transaction becomes less than two, the decision to enter into such transaction shall be made by the General Meeting by a majority vote of the shareholders not related to the transaction.
87. Անձանց որոշակի խմբի հետ Գործարքների դրույթները չեն կիրառվում. 1) «Պղնձի Միավորված Ընկերություն» ԲԸ հետ գործարքների նկատմամբ, ինչպես նաև այն ընկերությունների նկատմամբ, որոնցում Ընկերությունը կամ «Պղնձի Միավորված Ընկերություն» ԲԸ ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այլ անձանց միջոցով) տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասեր կանոնադրական կապիտալում) ավելի քան 50 տոկոսին. 2) «Գեոպրոմայնինգ Ինվեսթմենթ (ՍԻՓ) Լիմիթեդ», «Կառլոու Բ. Վ.» մասնավոր ՍՊԸ, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և «Արդյունաբերական Ընկերութուն» ԲԸ հետ գործարքների նկատմամբ. 3) Այն անձանց գործարքների նկատմամբ, որոնցում Հայաստանի Հանրապետությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այլ անձանց միջոցով) տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի (կանոնադրական	87. The provisions on Transactions with the Specified Group of Persons shall not apply to: 1) The transactions with JSC "United Copper Company", as well as the companies in which the Company or JSC "United Copper Company" holds, directly or indirectly (through other persons), more than 50 percent of voting shares (participatory interests); 2) Transactions with Geopromining Investment (CYP) Limited, Karlou B.V., LLC "GeoProMining Gold", CJSC "Agarak Copper-Molybdenum Combine" and JSC “Promyshlennaya Kompania”; 3) Transactions with persons in which the Republic of Armenia owns, directly or indirectly (through other persons), more than 50 percent of voting shares (participatory interests); 4) Transactions entered into in the ordinary course of business of the Company, provided that the Company entered into multiple similar transactions, that are not Transactions with the

կապիտալում բաժնեմասերի) ավելի քան 50 տոկոսին. 4) Ընկերության բնականոն գործունեության ընթացքում կատարված գործարքների նկատմամբ, պայմանով, որ Ընկերությունը երկար ժամանակահատվածի ընթացքում բազմիցս, միանման պայմաններով, կատարում է նմանատիպ գործարքներ, որոնք անձանց որոշակի խմբի հետ գործարքներ չեն հանդիսանում. 5) Ընկերությանը, եթե այն բաղկացած է մեկ մասնակցից, որը միաժամանակ Գլխավոր տնօրենի լիազորություններն ունեցող միակ անձն է: 6) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերն Ընկերությանը փոխանցելիս ծագող հարաբերությունների նկատմամբ. 7) Ընկերության վերակազմակերպման գործընթացում՝այդ թվում՝ միաձուլման պայմանագրերով և միացման պայմանագրերով գույքի նկատմամբ իրավունքները փոխանցման ժամանակ ծագող հարաբերությունների նկատմամբ. 8) նախնական պայմանագրի պայմաններով կնքված գործարքների նկատմամբ, եթե որոշում է կայացվել այն կնքել սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ անձանց որոշակի խմբի հետ Գործարքներ կնքելու համար. 9) բաց աճուրդներով կամ բաց աճուրդների արդյունքներով կնքված գործարքների նկատմամբ, եթե նման աճուրդների անցկացման կամ դրանց մասնակցության պայմանները նախապես հաստատված են Տնօրենների Խորհրդի կամ Ընդհանուր Ժողովի կողմից. 10) այն գործարքների նկատմամբ, որոնց առարկան գույքն է, որի գինը կամ հաշվեկշռային արժեքը կազմում է ոչ ավելի, քան Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 10 տոկոսը՝ որոշված վերջին հաշվետու ամսաթվի դրությամբ նրա հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների տվյալների համաձայն.	Specified Group of Persons, during a long period of time and on similar terms; 5) the Company if it has a sole participant who is concurrently the only person vested with the powers of the General Director; 6) the relations arising from the transfer of shares to the Company in the cases stipulated by the Law of the Republic of Armenia "On Joint-Stock Companies"; 7) the relations arising from the transfer of title to property during the reorganization of the Company, including under merger and acquisition agreements; 8) the transactions entered into on the terms identical to the terms of the preliminary agreement if the decision to enter into such agreement was made in accordance with the procedure for entering into Transactions with the Specified Group of Persons stipulated by this Charter; 9) the transactions entered into at open auctions or based on the results of open auctions if the terms of such auctions or participation therein was approved in advance by the Board of Directors or the General Meeting; 10) the transactions in respect of the property with the price or book value not exceeding 10 percent of the book value of the Company's assets, as determined according to its accounting (financial) statements as of the most recent reporting date.
88. Եթե Անձանց որոշակի խմբի հետ գործարքը միաժամանակ հանդիսանում է Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք, ապա դրա կնքումը կատարվում է հաշվի առնելով նաև Կանոնադրության 81 կետը:	88 If a Transaction with the Specified Group of Persons is simultaneously a major transaction involving the disposal or acquisition of the Company's property, such transaction shall be entered into subject to clause 81 of the Charter.

XI.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 89. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ընդհանուր Ժողովի կողմից ընտրված Վերստուգիչ հանձնաժողովը: Ընկերության կազմում ձևավորվում է Վերստուգիչ հանձնաժողով, որը բաղկացած է առնվազն երեք անդամից: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել ցանկացած գործունակ անձ, որը Ընկերության կառավարման մարմինների կազմում ընդգրկված չէ:	**XI. CONTROL OVER THE COMPANY'S FINANCIAL AND ECONOMIC ACTIVITIES** 89. The control over the financial-economic activities of the Company is implemented by the Audit Commission which is elected by the General Meeting. The Audit Commission consisting of at least three members is formed within the Company. Any legallty capable person who is not involved in the management bodies of the Company can be appointed to act as a member of the Audit Commission.
90. Վերստուգիչ հանձնաժողովը վերահսկում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարումը, ստուգում Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և սույն Կանոնադրությանը: Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ, Ընդհանուր Ժողովի կամ Տնօրենների Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի պահանջով վերստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքները, ստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը: Վերստուգիչ հանձնաժողովն իր նախաձեռնությամբ կարող է ստուգումներ իրականացնել ոչ ավելի, քան տարին երկու անգամ: Վերստուգիչ հանձնաժողովի պահանջով, իրեն տրամադրվում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և պարզաբանումները՝ կապված Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության հետ:	90. The Audit Commission monitors the implementation of decisions of the management bodies of the Company, checks the consistency of the Company's documents with laws, other legal acts and the present Charter. The Audit Commission has right to perform examination of annual results of financial and economic activities of the Company, to examine the financial-economic activities of the Company by its own initiative, by the decision of the General Meeting or the Board of Directors as well as by the request of shareholder (s) owning at least 10 percent of voting shares of the Company. The Audit Commission can perform examinations by its initiative not more than twice a year. At the request of the Audit Commission, it shall be provided with all necessary documents, materials and explanations related to financial-economic activities of the Company.
91. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը պահանջվում է Ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշիռը հաստատելիս:	91. The conclusion of Audit Commission is required for approving of the Company's annual balance sheet.
92. Հայաստանի Հանրապետությունը կամ ընկերություն կամ հիմնադրամ, որը Հայաստանի Հանրապետության անունից և/կամ ի շահ Հայաստանի Հանրապետության տնօրինում է	92. The Republic of Armenia or a company or a fund which owns on behalf of and/or in the interests of the Republic of Armenia at least 15% of the share capital of the Company has the right to nominate a person who will perform the functions

Ընկերության բաժնետոմսերի առնվազն 15%-ը, իրավունք ունի առաջադրելու անձի, ով կիրականացնի Ընկերության ֆինանսական վերստուգողի գործառույթները: Այդ անձը կնշանակվի Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից և կստանձնի Գլխավոր Տնօրենի Տեղակալի պաշտոնը: Գլխավոր Տնօրենի Տեղակալի գործառույթների շրջանակը կսահմանվեն առանձին կանոնակարգով:	of a financial controller of the Company. Such person will be appointed by the General Director of the Company and will hold a position of the Deputy General Director. The scope of the functions of such Deputy General Director will be provided for in a separate regulation.
XII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ 93. Գլխավոր տնօրենը միջոցներ է ձեռնարկում Ընկերության պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:	XII. BOOK-KEEPING AND REPORTING 93. The General Director takes measures to ensure proper performance of the Company's obligation set forth by the legislation of the Republic of Armenia.
94. Ընկերությունը օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան պետք է ունենա հետևյալ փաստաթղթերը. 1) Ընկերության պետական գրանցման վկայականը, հաստատված Կանոնադրությունը, դրանում կատարված փոփոխությունները և ավելացումները, Կանոնադրությունը նոր խմբագրությամբ, Ընկերության հիմնադրման որոշումը և Ընկերության նկատմամբ հիմնադիր պայմանագիրը. 2) Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված իր ակտիվների նկատմամբ Ընկերության իրավունքները հավաստող փաստաթղթերը. 3) Ժողովի և կառավարման այլ մարմինների կողմից հաստատված ընկերության ներքին փաստաթղթերը. 4) Ընկերության ֆինանսական հաշվետվությունները և կազմված աուդիտորական հաշվետվությունները. 5) Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման վերաբերյալ փաստաթղթերը. 6) Հաշվապահական փաստաթղթերը. 7) Պետական մարմիններին ներկայացված հաշվապահական, հարկային և վիճակագրական հաշվետվությունները և այլ փաստաթղթեր. 8) Ընկերության ժողովների, Տնօրենների Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի և	94. The Company shall maintain the following documents within terms stipulated by law and legal acts: 1) Certificate of state registration of the Company, the approved Charter, amendments and addenda made to it, new edition of Charter, the decision to establish the Company and the contract on establishment of the Company; 2) Documents substantiating the rights of the Company toward the assets; reflected in the balance sheet of the Company; 3) Internal documents of the Company approved by the Meeting and other management bodies; 4) Financial statements and audit reports of the Company; 5) Documents for accomplishment of preemptive rights of shareholders; 6) Accounting documents; 7) Accounting, tax and statistical; statements and other documents submitted to state bodies; 8) Protocols, voting bulletins of the Company's meetings, Board of Directors, Audit Commission and the Counting Committee; 9) Conclusions of the Audit Commission of the Company, auditor, state and local self-governance control bodies; 10) Contracts signed by the Company;

հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները և քվեաթերթիկները. 9) Ընկերության Վերստուգիչ հանձնաժողովի, աուդիտորի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների եզրակացությունները. 10) Ընկերության կողմից կնքված պայմանագրերը. 11) Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը այն ժամանակահատվածի համար, երբ նրանք գտնվել են Ընկերության հսկողության տակ, ներառյալ նշված գրանցամատյանում փոփոխությունները հաստատող բոլոր փաստաթղթերը. 12) Ընկերության փոխկապակցված անձանց և Ընկերության հետ կապված անձանց ցուցակները (նշելով նրանց ունեցած բաժնետոմսերի քանակը), ինչպես նաև Ընկերության էական և մաժորիտար բաժնետերերի ցուցակները. 13) Ընկերության առանձին բաժինների և ստորաբաժանումների մասին կանոնակարգերը. 14) Օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերը, Ընկերության ներքին փաստաթղթերը, Ժողովի, Տնօրենների Խորհրդի և կառավարման այլ մարմինների որոշումները: Ընկերության բաժնետերերի պահանջով Ընկերությունը նրանց հնարավորություն է տալիս ծանոթանալ նախորդ կետում նշված փաստաթղթերին և հինգ օրվա ընթացքում նրանց տրամադրում է փաստաթղթերի պատճենները, բացառությամբ գաղտնի տեղեկատվության և Գլխավոր տնօրենի հրամանների և կարգադրությունների: Գաղտնի տեղեկատվության ցանկը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից: Նույն տեղեկատվությունը բաժնետիրոջ կողմից կարող է պահանջվել միայն մեկ անգամ:	11) The register, including all documents proving changes in it, of owners of nominal securities at the period when being under the control of the Company; 12) Lists of the Company's affiliates and related persons (with indication of the number of shares owned by them) as well as significant and large shareholders of the Company; 13) Regulations of the Company's separate subdivisions and departments; 14) Other documents provided for by the laws and legal acts, internal documents of the Company, decisions of the Meeting, Board of Directors, and other management bodies. At the request of Company's shareholders, the Company shall grant them the opportunity for familiarization with documents mentioned in the previous point and provide them with copies of documents within a five-day period except for confidential information and instructions and orders of the General Director. The list of confidential information is defined by the Board of Directors. The same information may be requested by a shareholder no more than once.
95. Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու վերջին տարեկան հաշվետվության և Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության պատճենները:	95. Each shareholder of the Company has right to receive copies of the last annual report and conclusion of the Audit Commission free of charge.
96. Տնօրենների Խորհրդի անդամներն իրավունք չունեն երրորդ անձանց փոխանցել, զիջել կամ այլ կերպ հրապարակել գաղտնի տեղեկատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված այդ տեղեկատվության բացահայտման դեպքերի,	96.The Board members shall not be entitled to transfer, assign or otherwise disclose any confidential information to third parties, other than in the cases where such disclosure is required by the applicable laws of the Republic of Armenia, or to use any confidential information for the purposes not related to their professional activities.

ինչպես նաև իրավունք չունեն օգտագործել գաղտնի տեղեկատվությունն իրենց մասնագիտական գործունեության հետ կապ չունեցող նպատակների համար, մասնավորապես, իրավունք չունեն օգտագործելու գաղտնի տեղեկատվությունը Ընկերության, նրա բաժնետերերի և կառավարման մարմինների այլ անդամների շահերի դեմ:	In particular, they are not entitled to use confidential information to the detriment of the Company, its shareholders and other members of management bodies.
XIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄ 97. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության գործունեության դադարեցմանը՝ առանց Ընկերության իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցելու: Ընկերության լուծարման հիմքերը ներառում են հետևյալը. 1) Ընկերություն լուծարելու մասին որոշումը՝ առանց իրավահաջորդ նշանակելու. 2) Պետական գրանցման ընթացքում թույլ տված օրենսդրության խախտումների հետևանքով դատարանի որոշմամբ Ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը. 3) Օրենքով նախատեսված այլ հիմքեր: Մինչև լուծարման մասին որոշում կայացնելը Ժողովը հաստատում է Ընկերության ամփոփիչ հաշվեկշիռը և Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացված Ընկերության լուծարման պլանի նախագիծը: Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկատվությունն արտացոլվում են իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում՝ Լուծարային հանձնաժողովի դիմումի հիման վրա: Լուծարային հանձնաժողովի նշանակման պահից Ընկերության կառավարման լիազորությունները փոխանցվում են Լուծարային հանձնաժողովին: Լուծարային հանձնաժողովը հանդես է գալիս դատարանում լուծարվող Ընկերության անունից: Լուծարային հանձնաժողովի անդամ լինելու կամ դրանում իրենց լիազոր ներկայացուցիչներին նշանակելու իրավունք ունեն քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսը տնօրինող բաժնետերերը: Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարեցվում է լուծարման պետական գրանցման պահից:	**XIII. LIQUIDATION OF THE COMPANY** 97. The liquidation of the Company results in termination of the Company without transfer of rights and obligations of the Company to other parties on a basis of legal succession. The bases for the liquidation of the Company are as follows: 1) The decision on liquidation of the Company without a legal successor; 2) Recognition of the state registration of the Company as invalid by the court due to violations of the law committed during its process; 3) Other bases specified by the law. Prior to taking a decision on the liquidation, the Meeting shall approve the summary balance sheet of the Company and draft liquidation plan of the Company presented by the Board of Directors. The information on being in the process of liquidation is recorded in the state registration journal of legal entities on the basis of the application of the liquidation committee. From the moment of appointment of the liquidation committee, the authorities of management of the Company pass to the liquidation committee. The liquidation committee acts in the court on behalf of the Company being liquidated. The shareholders owning at least 10 percent of voting shares have a right to be included in the liquidation committee or appoint their authorized representatives in it. The Company liquidation is considered completed and its existence terminated from the moment of state registration of the liquidation.

XIV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ 98. Ընկերության բաժնետերերի և Ընկերության կառավարման մարմինների կազմում ներգրավված աշխատողների համար սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից հետո հինգերորդ օրը:	**XIV. CONCLUDING PART AND TRANSITION PROVISIONS** 98. For the Company's shareholders and the employees included in management bodies of the Company, this Charter enters into force on the fifth day upon its admission.
99. Սույն Կանոնադրությունը պետական գրանցման է ներկայացվում այն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում: Սույն Կանոնադրությունը ստորագրելու պարտականությունը կրում է Գլխավոր տնօրենը:	99. This Charter is submitted for state registration within one year after its admission. The obligation to sign this Charter is put on the General Director.
100. Սույն Կանոնադրությունը այլ (երրորդ) անձանց համար ուժի մեջ է մտնում նրա պետական գրանցման պահից:	100. The present Charter enters into force for other (third) parties from the moment of its state registration.